

Սիմէօնեան Պարօն—Վարդանեան խնդրադրով զիմելով Սինօգին՝ յայտնում է իւր ամուսին Սաշատուր Մարտիրոսեան Օգոյեանի անյայտանալը և կրկին ամուսնանալու իրաւունք է խնդրում Սինօգը վճռեց. Սենթթական լրագրում յայտարարել Սաշատուր Մարտիրոսեան Օգոյեանի անյայտանալու մասին և, եթէ վեց ամսուայ ընթացքում չիմացուի նորա որտեղ լինելը, այդ ժամանակ միայն իրաւունք տալ նորա կին Յուզիթ Պարօն—Վարդանեանին մտանել ի նոր ամուսնութիւն:

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

Մ'ի ԿԱԼ ԷՆԿԱՌԱԿ ՉԱՐԻՆ:

«Լուսոյս զի ասացաւ. ակն ընդ ական եւ ասամ ընդ ասամ: Այլ եւ ասեմ ձեզ՝ մի կալ հակառակ լարին. այլ երբ ոք ամիցէ ապստի յաջ ծնօս քո՝ դարձն նմա եւ գնիւսն. եւ որ կամիցի ոք դասել եւ անուոյ զշապիկս քո, քոյ ի նա եւ գրած կան քո. եւ որ աստապարհակ վարիցի զկեզ մղոն մի, երբ ընդ նմա եւ երկուսն:

Մատթ. Ե. 38—41

ԱՅԱ մէկն ևս ս. Աւետարանի այն խօսքերից, որոնք ամէնից շատ բերնէ բերան են անցնում և ամէնից քիչ հասկացուում—Սխալ է հասկացուում նախ Հին Կտակարանի այն պատուէրը, որ Նրինաւոր Վարդապետը բացատրում է այստեղ և լրացնում: Ելից զբքի մէջ է այդ պատուէրը (Խ. 24), ուր ոչ թէ մարդոց բարոյական, սկզբնականութիւններն են որոշուած, այլ օրէնք է տրուած՝ մի չափ է սահմանուած, որի համաձայն իւրաքանչեւ զատաստանի պէտք է ենթարկելին և պատիժ տալին յանցագործին: Օրէնստուն չի ասում հարկաւ զրկանք կրողին. Դու պարտաւոր ես քո աչքը հանողի աչքը հանել՝ ատամ հանողի ատամը, այլ թէ իրաւունք ունիս այդպիսի արդար հատուցում պահանջելու՝ աչքի փոխարէն աչք, ատամի փոխարէն ատամ և ոչ աւելի: Դորանով նա ոչ թէ բացարձակ ազատութիւն

է տալիս փրփառութեան զգացման, որ չափ ու սահման չունի և թելադրում է յաճախ մի ատամի փոխարէն ընկերի կեանքը խելի նորա ամբողջ տունը կործանել, այլ ընդհակառակն սահմանափակում և, կարելի է ասել, բոլորովին խափանում է այն. փոխանակ անմիջապէս բաւականութիւն որոնելու վիրաւորուած կրքերի համար, նա պատուիրում է դատաստանի զիմել և այդտեղ օրէնքի համաձայն հատուցումն ընդունել: Այնուամենայնիւ մի բարոյական պարտականութիւն դնում է Նա, բայց ոչ թէ զրկողի, այլ զրկողի և հեռակապէս բոլոր մարդոց վերայ. մէկին զրկանք հասցնելիս մտածել իւրաքանչիւր անգամ թէ, նա իրաւունք ունի արդար հատուցումն պահանջելու, և Աստուած, իւր տուած օրէնքի միջոցաւ վաւերացնելով այդ իրաւունքը՝ ապահովում և անձեռնմխելի է դարձնում բոլոր մարդոց կեանքն ու ստացուածքը, այնպէս որ զրկանք հասցնողը ուղղակի Նորա հետ դործ ունի. զրկեալը եթէ ուրիշ ոչ մի միջոց իսկ չունենայ հատուցումն պահանջելու՝ յամենայն դէպս Նորան զիմել և Նորա միջոցաւ հատուցումն գտնել կարող է:

Քրիստոս զրկեալին է ուղղում իւր խօսքը. Նա մի նոր օրէնք չէ տալիս, որի համաձայն կատարուած յանցանքը դատել պէտք է, այլ բարոյական կեանքի մի նոր սկզբունք, որին համապատասխան պէտք է լինի մեր վերաբերումը դէպի յանցագործը: Օրէնքն արտաքին ինչ է և բաւականութիւն է գտնուած երբ իւր պահանջները արտաքին ճշգրտութեամբ տառացի կերպով կատարուած են. բարոյական սկզբունքը ներքին է, մեր ներքին բարոյական աշխարհի մէջ է գործ գրուում: որպէս զի մեր վերաբերումը համաձայն լինի նորան, հարկաւոր է որ նախ նորա համաձայն ներքին զգացումն ունենանք: Այս պատճառաւ արդարութեան օրէնքն ամենեւին իւր տեղից չի շարժում: Երբ Քրիստոս բարոյական պարտականութիւն է դնում մեր առաջ՝ չհակառակել չարին, չարը չարով՝ զրկանքը զրկանքով չհատուցանել, այլ բարութեամբ խափանել չարը—ի՞նչ զգացումն է մեզ ստիպում հակառակել չարին կամ մեզ հասցրած զրկանքի փոխարէն հատուցումն պահանջել, արդե՞՞ք

արդարութեան զգացումը. ո՞չ՝ կասէ անշուշտ իւրաքանչիւր որ իւր սրտում արդարութեան զգացմամբ կարող ենք առաջնորդուիլ մենք այն դէպքում միայն, երբ հարցն ուրիշի մասին է, երբ մեր ընկերոջ զրկուած, հարբստահարուած ենք տեսնում, և մի ձայն մեր ներսից բողբոջում է դորա դէմ՝ պահանջում որ չարիքը վերանայ մէջ տեղից և արդարութիւնը վերականգնի. այդպիսի զգացումը սուրբ է և գովելի՝ Արդարադատ Աստուծոյ թելադրած: Բայց երբ զրկուածը մենք ինքներս ենք՝ այն ժամանակ սովորաբար եսն է խօսում մեր մէջ. մենք հատուցումն ենք պահանջում ո՞չ թէ նորա համար, որ Աստուծոյ օրէնքը կատարուած լինի, այլ որ մեր վիրաւորուած անձնասիրութիւնը զոհացում գտնէ, մինչ այդ զգացումը գոյութիւն պէտք է չունենայ այնտեղ, ուր Բրիտտոսի աւետարանն է իշխում, ուր վերացուած է իմի և քոնի խորութիւնը:

«Մի կալ հակառակ չարին» — չարի ոչո՞ն արդէն հակառակութեան մէջ է. մարդիկ նպաստում են նորա զօրանալուն՝ չար զգացումներին սնունդ տալով, չարի դէմ նոր չարիք դնելով և այսպէս չարը չարի վերայ բարդելով. այն ինչ, եթէ նա ինքն իրեն մնայ և ընդգիծութիւն չգտնէ, իբրեւ անբովանդակ և բացասական զօրութիւն՝ պէտք է անհրաժեշտաբար իւր նշանակութիւնը կորցնէ և ի չիք դառնայ: — Ի՞նչ աւելի մեծ չարիք, աւելի մեծ գրկանք՝ պատուաւոր, ինքնաձանաչ, բարոյական մարդու համար, քան պատուի դէմ կրած վիրաւորանքը. ողորմելի է այն անձը, որ չի գերադասում ստացուածքից զրկուել, ամեն տեսակ արտաքին ծնշումներ և նեղութիւններ կրել՝ քան եթէ մի ապասկ աջ ծնօտի վերայ, Մեզ հայրիս մեղադրում են ազգովին, թէ մենք այդպիսի ողորմելի արարածներ ենք՝ մի կտոր հացի մի կտակ դրամի համար թոյլ ենք տալիս ամեն նախատինք և անարգանք հասցնել մեզ, երանի՜ որչափ կարելի է շատ լինէին ազգի մէջ անհատներ, որոնք նոյն իսկ կեանքի գնով նպաստէին այդ վատ անունը վերացնելու. այդպիսիներն իրաւամբ ազգի պարծանք կլինէին: Եւ սակայն անհեթեթ խօսք

է միթէ Փրկչի ասածը՝ Աջ ծնօտիդ ապասկ խփողին ձախը դարձրու: — Սղարայրասպան Կալինի թոռան թոռ Ղամէքից սկսած մինչև այժմ անթիւ մարդիկ են գտնուել, որոնք իրենց հասցրած ամեն մի վիրաւորանքի փոխարէն եօթանասնեկին եօթն հատուցել են, և միայն մէկն է եղել, որ «դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ, և ոչինչ համարեցաւ»: Բայց բոլոր այն պատուախնդիրները անցել գնացել են, և նոցա պաշտպանած պատիւը հող ու մօխիւր է դարձել, մինչ անմոռնչ Անարգեալը տիրական անուամբ և պատուով ծոխացած՝ անանց և անսահման փառքի բարձրութեան վերայ կանգնած է, և Նորա առաջ ծունկ են խոնարհում երկնաւորներն ու երկրաւորներն ու օանդարամետականները: Համեմատեցէ՛ք Նորան նոյն իսկ իւր անարգանաց ժամում իւր վերայ դատաւոր նստած Պիղատոսի հետ, որ պարծենում էր թէ իշխանութիւն ունի արձակել Նորան կամ դատապարտել: Այդ ազնուական հռովմայեցին սուր կքաշէր անշուշտ ո՞չ միայն ապասկի այլև ամենաթեթեւ անպատուութեան համար, եթէ անպատուոյն ինքնակալ Օգոստոսի մօտիկ ազգականն իսկ լինէր. բայց նա վախեցաւ և տեղի տուաւ իւր համար յանդափս արհամարհելի հրէայ ամբոխի առաջ՝ անպատուութիւն չհամարեց իւր արդար ձանաչած մարդուն յակամայից մահուան դատապարտել: Այդպէս են հասկանում և այդպէս պաշտպանում ազնուական մարդիկ իրենց պատիւը. ս. Աւետարանի աշակերտներն այլ կերպ պէտք է հասկանան:

Լաւ մտածենք. միթէ մեր պատիւը վերականգնած է լինում յիրաւի, երբ անպատուութիւն ենք հասցնում ուրիշին. Նայ որ քեզ անպատուեց՝ անզգայ և անխիղճ մէկն է գուցէ. ինչպէս պէտք է յանձն առնես անպատուել նորան դու, որ կենդանի բարոյական զգացումն ունիս և խորապէս զգում ես ամենաթեթեւ անարգանքն անգամ միթէ բարոյական զգացումը չէ ասում՝ ինչ որ չես կամենում քեզ անեն, դու ևս ուրիշին մի՛ արա. լաւ է երկու և երկուստան անգամ անարգանք ու զրկանք կրել՝ քան մի անգամ ուրիշին անարգել և զրկել: — Ով տար-

բերութիւն չի գտնուի՝ այսպէս խորհողի և այսպէս վարուողի և այն անամօթի մէջ, որ ժողովրդական ասացուածքի համաձայն՝ երեսին լեզուով եւս ասում է, անձրեւ է գալիս — նա զուրկ է, կնշանակէ, դեռ բոլորովին բարոյական գիտակցութիւնից. նորա համար տեւրունական պատուէրը նոյն է թէ մարդարիտը խոյրերի առաջ ձգած: Բրիստոս այդպիսիների հետ չէ խօսում: այլ նոցա հետ որոնք ձրգտում են իրենց Կատարիայ Հօր արժանի որդիներ լինելու և պէտք է իմանան թէ ինչպէս Դու անասհման բարութիւնը ցոյց տուաւ Նա՝ մարդոց կողմից ապերախութիւն միայն և ամեն տեսակ անարգանք տեսնելուց յետոյ ամենամեծ զոհարելութիւնն անելով և այսպէս չարը բարեաւ յաղթելով՝ գծելով և մեզ համար ընդ միշտ բարւոյ յաղթութեան ծանապարհը:

Անեղբայր թեթեամտութիւն է ուրեմն մեր ներկայ սերունդի մէջ շատ յաճախ գործածուող այն դարձուածք, թէ «Նա մոգսիսական եմ անին ընդ ական-ի օրէնքին եմ հետեւում»: Մոգսէս այդ օրէնքով վրիժառութեան զգացումը չէ նուիրագործել, ինչպէս ասացինք, այլ արդար դատաստանի սահմանն է որոշել, իսկ Բրիստոս նպատակ դնելով դատաստանի կարիքը բոլորովին վերացնել մէջտեղից՝ պատուոյ և ինքնաձանաչութեան զգացումը մեր մէջ խեղդել ու ոչնչացնել չի կամեցել, այլ այնչափ զարգացնել, նրբացնել ու բարձրացնել, որ մենք ընդունակ լինինք մեր եսն ուրանալու, մի ուրիշ՝ եղբայրական սիրոյ կապով բոլոր եւս-երը խափանող և ի մի ամփոփող, ընդհանուր բարոյական վսեմ եւ ծանաշելու և նորա պատիւը պաշտպանելու: Այս տեսակէտից մեր կրած իւրաքանչիւր անարգանքն ու զրկանքը մի չարիք է, որի վնասը միայն մեզ չէ հասնում, այլ և գործողին, այն նոյն իսկ բոլոր մեր շրջապատողներին, ուստի և ուղղել կարելի է այն ոչ թէ հատուցմամբ մի նոր վնաս յառաջ բերելով, այլ եղածը սիրով ու բարութեամբ ծածկելով:

Սէր և բարութիւն գործ դրած չենք լինի անշուշտ, եթէ աւետարանի խօսքերը տառացի ձգութեամբ կատարենք, առանց նոցա իմաստի խորքը թափանցելու, կրկնում ենք՝

Բրիստոս օրէնքներ չէ տուել, որ տառացի ձգութեամբ կատարել հարկ լինի, այլ սկզբունքներ՝ բարոյական զաղափարներ, որ հոգւով և ճշմարտութեամբ ըմբռնել պէտք է և ոչ միայն գործել, այլ նաեւ զգալ ու շարժել նոցա համաձայն: Մի երեսիդ ապական խփողին միւսը դարձրու, ասաց Նա, իսկ երբ քահանայապետի ծառան ապականեց Սորան՝ միւսը չդարձրեց, այլ բոլորեց այդ անզգամութեան դէմ: այդտեղ կանգնած էր Նա իբրեւ մի անպաշտպան կալանաւոր, որին իւրաքանչիւր որ իրաւունք էր համարում խրփել՝ զարձնէր երեսը թէ չզարձնէր, միեւնոյն էր, բայց որ Նա կարող էր երկնքից հրեշտակների գնտեր իջնցնել Դրեն պաշտպանելու, Դրեն անարգողներին, չարչարողներին, խաչողներին պատժելու՝ և չարաւ, այդ էր ահա սկզբունքի իսկական գործադրութիւնը, այդ և չարը բարւով հատուցանելու յաւիտենական նախազաղափար մեզ համար: Մեզ հարկաւոր է միայն ունենալ այն ոգին, որ այդպէս վարուել է թեւադրում: ապա գծուար չի լինի իւրաքանչիւր մասնաւոր դէպքում որոշել, թէ ինչպէս վարուինք: Մեր գործը պէտք է ինքնարեւարար ըլլի՝ մեր ներքին զգացումից, և ոչ մեքենական հեռեղովութիւն լինի մի արտաքին հրամանի, իսկ մեր ներքին զգացումը բարի պէտք է լինի՝ ինչպէս մեր, այնպէս և մեր շրջապատողների կեանքը բարեւաւելու ու քաղցրացնելու բարոյական գիտակցութիւնից յառաջ եկած, ոչ թէ եսական ձգտումներից:

«Նա նա որ քեզ դէմ դատ բանալ և չապիկդ առնել կամենում է, թող իրեն բաժկոնդ ևս» — երեւակայել պէտք է՝ որչափ դառնութիւն որչափ չարիք կվերանար աշխարհից, եթէ այս սկզբունքը գոնէ կիսով չափ իրագործուէր: «Նա Նա որ քեզ ստիպում է մի մղոն տեղ վազել, գնա հետը երկու մղոն» — վէճ ու կռիւ, պատերազմ և արիւնհեղութիւն ինչպիսի անխորհուրդ բաներ պէտք է դառնային, եթէ մարդիկ այս վսեմ պատուիրանի խորհուրդն ըմբռնել և ըստ այնմ շարժուել կարողանային: Մի չապիկ, մի կտոր դատարկ հոդ չէ՝ յաճախ պատճառ, որ մարդիկ տաննակ տարիներով դատարանի դռներից չեն հեռանում՝ ստացուածք, առողջութիւն:

պատիւ: ամեն ինչ կորցնում են և ստիպում ուրիշներին ևս կորցնել նոյնը, վեճերն և կռիւները մեծ մասամբ նորանից չեն յառաջանում: որ կռուող կողմերից ոչ մէկը միւսին մի քայլ տեղի տալ չէ կամենում:—Յայտնի է այն ճգնաւորի պատմութիւնը, որ հասկանալ չէր կարող թէ ինչիցն է կռիւ և պատերազմ լինում աշխարհի մէջ: Ընկերը մէջտեղ դրաւ մի փսեւթ, որ իւրաքանչիւրը իւր կողմը պէտք է քաշէր և պնդէր թէ իւրն է. այն ժամանակ հասկանալի պէտք է դառնար կռուի պատճառը, մի քանի անգամ քաշեցին, բայց միամիտ ճգնաւորը շուտով տեղի տուաւ՝ «քոն է, թող քոնը լինի»: ասելով, փորձը կրկնեցին ու երեքկնեցին և հետեանքը նոյնն եղաւ՝ ճգնաւորը չկարողացաւ այնուամենայնիւ հասկանալ կռուի պատճառը:—Եւ մեզ ամէնիս համար անհասկանալի և օտարօտի կլինէին հակառակութիւն, վեճ, բանասարկութիւն, խռովութիւն, նախանձ, թշնամութիւն՝ դատ և պատերազմ, եթէ այդ ճգնաւորի միամտութիւնն ունենայինք՝ Տիրոջ ցանկացած աղաւնոյ միամտութիւնը, առանց այս աշխարհի մէջ ապրողների համար անհրաժեշտ օձի խորամանկութիւնից զուրկ լինելու:



„ՊԱՏԱՐԱԳ“ ԲԱՌԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Պատարագ բառը զանազան նշանակութեամբ գործածուած է ի ս. Գիրս:

Մախ՝ կը նշանակէ զենիկ կենդանի, զոհ, յունարէն թիւսիա, զոր օր. «Չուեաց Խարսէլ, և եկն ի ջրհորն Երզման, և մատոյց պատարագ Աստուծոյ»:

Երկրորդ՝ նուէր, ձօն. յունարէն բրօսֆօրա, զոր օր. «Ընդ զոհս և ընդ պատարագըս ոչ հաճեցար», Սաղմ. ԼԹ. 7.—«Ոչ ողջակեզք և ոչ զոհք և ոչ պատարագ», Դան. Գ. 38:

Երրորդ՝ տուրք յունարէն դօրօն, և ամենայն ընծայ որ կը մատուցուի Աստուծոյ

կամ մեծի ումեք, նաև կաշառք, զոր օր. «Հայեցաւ Աստուած յԱբէլ և ի պատարագս նորա», Ժննդ. Գ. 4:—«Մատուցին նմա պատարագս՝ ոսկի, կնդրուկ և զմուռս», Մատթ. Բ. 11:—«Տարայք առնն պատարագս՝ ռետին և մեղր և խունկս», Ժնն. ԽԳ. 11:—«Ընծայս և պատարագս տանել միմեանց», Յայտ. ԺԱ. 10:

Իսկ ի նոր օրէնս՝ Բահանյադործութիւն ս. մարմնոյ և արեանն Բրիստոսի, զոր օրինակ, Պատարագ Բրիստոս մատչի գառն Աստուծոյ. Խորհրդատետր:—«Ընկալ հայր սուրբ մարգասէր, զպատարագս», Պատարագաւ հօր ի հօտ անուշից զմարմինդ առ ի մէնջ», Խորհրդատետր:

Պատարագի խորհուրդն երեք մաս կը բաժնուի՝ նուիրումն, սրբացուցումն և ծաշակումն. (Յայտնութիւն Աստուածգիտութեան երես292): Զարդիս ևս ընծայ կը նշանակէ Նուիրման պահուն, զոր օրինակ Պատարագ կօչի ընծայ, Խորհրդ. պտղ:—Այլ արժանի արա՛ մատուցանել քեզ զընծայս յինէն ի մեղուցեալ և յանարժան ծառայէն քումմէ», Խորհրդ: «Ընկալ առ ի մէնջ զառաջադրութիւնս զայս», այսինքն զընծայս, Խորհրդատետր: «Վասն այսօրիկ տամ քեզ նուէր նախ զհացս և զգինիս խորհրդով միածնիդ քո չարչարանաց», Մեկն. Պատ. Լմն. էջ 83:—«Եւ ընծայքն վերաբերին ի սեղանն», Խորհրդատետր:

Նոր կտ.-ի պատարագին ստուերքն էին հնումն.

1. Աբէլի, Նոյի և Աբրահամու զոհերը. «Եւ իբր Տէր ամենեցուն այսմ սպասաւորութեան՝ և անարիւն զենման՝ զքահանայութիւն աւանդեցեր մեզ», Խորհրդատետր:

2. Մեղքիսեղեկի հացն ու զինին. «Եւ Մեղքիսեղեկ արքայ Սաղեմայ եհան հաց և զինի. քանզի քահանայ էր Աստուծոյ Բարձրելոյ», Ժնդ. ԺԴ. 18:—«Զի Տէրն մեր փոխարկեաց զհացն ի մարմին իւր և զգինին ի յարիւն, և զնոյն առնել հրամայեաց աշակերտաց՝ առ ի լինել խորհուրդ եկեղեցւոյ, պարտ է զիտելը զի այս սուրբ խորհուրդ հաղորդութեան, ոչ միայն է խորհուրդ՝ որպէս այլ խորհուրդք եկեղեցւոյ, այլ նաև